ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Արշակունի թագավորների դերն ու ֆունկցիաները Հայաստանում որոշակիորեն տարբերվել են նրանց նախորդած հարստության գահակալների իրավասություններից[1]։ Այդ փոփոխությունները հիմնականում պայմանավորված են եղել երկրի արտադրողական ուժերի ընդհանուր զարգացման հիման վրա սոցիալ-տնտեսական առավել բարձր հասարակական հարաբերությունների առաջացումով, ինչպես նաև դաժան փորձություններից հետո Հայաստանում Արշակունյաց թագավորության հաստատման ռազմա-քաղաքական հանդամանքներով։

Արտաշես II-ից հետո մինչև Հայաստանում Արշակունիների թագավորության հաստատումն ընկած 80-ամյա ժամանակահատվածում վերջին Արտաշեսյանները և նրանց հաջորդած մյուս թագավորները, իրբև ժամանակի այս կամ այն առավել հզոր երկրի դրածո գահակալներ, չեն կարողացել ինքնուրույն ներքին և արտաքին քաղաքականություն վարել։ Նրանք ժամանակ անգամ չեն ունեցել այդ ուղղությամբ որևէ բան ձեռնարկելու, քանի որ իրար են հաջորդել գեղադիտակի արագությամբ։ Այդ ոչ երկար ժամանակամիջոցում Հայաստանի գահն իր տիրոջը փոխել է շուրջ երկու տասնյակ անգամ։

Իրավիճակը արմատապես փոխվեց Տրդատ Արշակունու ժամանակ։ Վայելելով իր եղբոր՝ Պարսկաստանի արքա Վաղարշ I-ի բազմակողմանի աջակցությունը և հենվելով հայ-պարթևական միացյալ ռազմական ուժերի վրա, նա, տասնամյա դաժան մարտերից հետո, կարողացավ քայլ առ քայլ դուրս մղել Հայաստանից հռոմեական զորքերին և վերականգնել թագավորական իշխանության ամբողջ հեղինակությունն իր իսկ զենքով վերանվաճված երկրում։

Տրդատը հնարամտորեն օգտագործեց հայ-պարթևական ռազմա-քաղաքական հնարավորությունները հայկական գահին տիրանալու համար և կարողացավ զենքի ուժով պարտադրել Հռոմին ճանաչելու իրեն Հայաստանի թագավոր։ Դեռ ավելին. Տրդատի ռազմական հաջողությունների հետևանքը եղավ այն, որ նա արտակարգ շուքով ընդունվեց «հավերժական քաղաքում» և այնտեղից վերադարձավ պատիվներով ու պարգևներով ծանրաբեռ[2]։

Տրդատ I-ից բացի մեզ հայտնի չէ և ոչ մի հայ թագավոր, որի գահը հենված լիներ այնպիսի հաստատուն եռոտանու, ինչպիսին էր հայ ժողովրդի աջակցությունը, պարթևական արքունիքի հովանավորությունը և Հռոմի հավանությունը։ Այս հանդամանքներում գահի վրա իրեն ամուր զգացող Տրդատը մեծ վճռականությամբ ձեռնամուխ եղավ երկրի քայքայված տնտեսությունն ու պետականությունը վերականգնելու, ավերված քաղաքները վերաշինելու գործին։

Հայ մատենագրության մեջ մենք չենք հանդիպում այս Տրդատի ուղղակի հիշատակությանը, մինչդեռ հունա-հռոմեական հեղինակների երկերում սակավ չեն Տրդատ I-ին վերաբերող վկայությունները[3]։ Բացի այդ, Տրդատի մասին այնպիսի առաջնակարգ սկզբնաղբյուր կա, ինչպիսին է Գառնիի հունարեն արձանագրությունը[4]։ Արձանագրության առաջին հրատարակիչները (Ստ.

---

[1] *Երվանդյան և Արտաշեսյան թագավորների մասին տե՛ս մեր հոդվածը՝ «Թագավորական իշխանությունը հին Հայաստանում», «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1, էջ 158—167։*

[2] Tacit., Annales, XVI, 24; C. Plin., Nat. Hist., XXX, 16; XXXIII, 54; Sueton, Nero, XIII.

[3] Jos. Flav., Bell. Jud., VII, 249—251; Antiq., XX, 74; Tacit., Annal., XII, 51; XIII, 34—37, 40—41 *և այլն։* Plin., Nat. Hist., XXX, 16; XXXIII, 54; Dio Cass., LII, 20; LXII, 23 *և այլն։*

[4] *«Սովետական Հայաստան», 23 սեպտեմբերի, 1945։* Հ. Մանանդյան, *Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946։* Ա. Աբրահամյան, *Գառնիի հունարեն արձանագրությունը, «Էջմիածին», 1947, մարտ—ապրիլ։* Я. А. Манандян, Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, *ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1951, № 4։* Б. Н. Аракелян,

Լիսիցյան, Հ. Մանանդյան, Ա. Աբրահամյան) գլխավորապես ուշադրություն են դարձրել նրա թվագրման, ինչպես նաև Գառնիում կատարված շինարարական աշխատանքների հետ նրա ունեցած առնչության վրա։ Հաջորդ ուսումնասիրողներն արդեն (Կ. Տրեվեր, Գ. Սարգսյան, Հ. Բարթիկյան, Ս. Կրկյաշարյան) արձանագրության որոշ տվյալների օգնությամբ փորձել են պարզել Արշակունյաց Հայաստանի սոցիալ-քաղաքական պատմությանը վերաբերող մի շարք հարցեր։ Այսուհանդերձ, Գառնիի արձանագրությունը դեռևս իրեն չի սպառել։ Այստեղ մենք ցանկանում ենք, Գառնիի արձանագրության ընձեռած տվյալների օգնությամբ, անդրադառնալ Տրդատի թագավորական իշխանության էությանը։

Ուսումնասիրողներն այս արձանագրության առաջին երկու տողը վերականգնում են երկու կերպ. ա) ΗΛΙΟΣ ΤΙΡΙΔΑΤΗΣ (ΒΑΣΙΛΕΥΣ) ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ....—«Հելիոս Տիրիդատես թագավոր Մեծ Հայքի» (Հ. Մանանդյան՝ առաջին ընթերցում, Գ. Սարգսյան, Հ. Բարթիկյան, Ս. Կրկյաշարյան). բ) ΗΛΙΟΣ ΤΙΡΙΔΑΤΗΣ (Ο ΜΕΓΑΣ) ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ...—«Հելիոս Տիրիդատես Մեծը Մեծ Հայքի...» (Հ. Մանանդյան՝ երկրորդ ընթերցում, Ա. Աբրահամյան, Կ. Տրեվեր)[5]։ Հ. Բարթիկյանը իրավամբ նշում է, որ այս երկու տողում արձանագրված է Տրդատի տիտղոսաշարը, որն ավարտվում է ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ բառերով[6]։

Այս տիտղոսաշարը մոտենում է Ապարանի հունարեն արձանագրությունում պահպանված Տրդատ թագավորի տիտղոսաշարին՝ ΤΙΡΙΔΑΤΗΣ Ο ΜΕΓΑΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ ΒΑΣΙΛΕΥΣ—«Տիրիդատես Մեծը, Մեծ Հայքի թագավոր»[7]։ Առաջինին նման է նաև XVI դարում Հռոմում հայտնաբերված հունարեն մի արձանագրության մեջ II դարում Հայաստանում գահակալած Արշակունի Բակուր թագավորի տիտղոսաշարը՝ ΑΥΡΗΛΙΟΣ ΠΑΚΟΡΟΣ ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ —«Ավրելիոս Պակորոս թագավոր Մեծ Հայքի»[8]։

Արշակունյաց Հայաստանում գահակալած թագավորների տիտղոսաշարի ևս մի տարբերակ կա, որը հանդիպում է վերջերս Գառնիում հայտնաբերված արամեերեն արձանագրության[9] և Սասանյան Շապուհ I-ի թողած Նախշ-ի-Ռուստեմի եռալեզվյան արձանագրության մեջ[10]։ Այս վերջին վավերագրում «թագավոր Մեծ Հայքի» փոխարեն Որմիզդ-Արտաշիրը կրում է «Մեծի թագավորի Հայոց— ΜΕΓΑΛΟΥ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΜΕΝΙΑΣ՝ տիտղոսը։ Այս տարբերությունը ճիշտ է նշմարել Ա. Փերիխանյանը[11]։ Մինչդեռ Ս. Երեմյանը գտնում է, որ Շապուհի ձեռքով Հայաստանի գահի վրա բարձրացած Որմիզդ-Արտաշիրը պիտի կրեր ոչ թե «Արմենիայի (կամ Հայաստանի) մեծ թագավոր», այլ «թագավոր Հայոց Մեծաց» տիտղոսը[12]։

Այսպիսի եզրահանգման դեմ է խոսում արձանագրության մեջ պարզ վկայված տիտղոսա-

---

Гарни I, Ереван, 1951; К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953; Գ. Սարգսյան, Գառնիի հունարեն արձանագրության շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 3։ Հ. Բարթիկյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 229—234։ Ս. Կրկյաշարյան, Եվս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին, նույն տեղում, էջ 235—238։

5 Այստեղ մեզ չի հետաքրքրում ΗΛΙΟΣ բառին տրված այս կամ այն մեկնությունը, որին մենք առանձին անդրադարձել ենք Գառնիի արձանագրությանը նվիրված մեր հոդվածում։ Համմտ. նաև՝ Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 58—59։

6 Հ. Մ. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 231։

7 М. И. Ростовцев, Апаранская надпись царя Тиридата, Анийская серия, № 6, СПб., 1911.

8 К. В. Тревер, Очерки..., էջ 237։

9 А. Г. Периханян, Арамейская надпись из Гарни, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 126։

10 Ernest Honigmann et André Maricq, Recherches sur les Res Gestae divi Saporis, Bruxelles, 1953.

11 А. Г. Периханян, նշվ. աշխ.։

12 Ս. Տ. Երեմյան, Նախշ-ի-Ռուստեմի «Բաարա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 64, ծան. 18։

շարը՝ ΤΟΥ ΜΕΓΑΛΟΥ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΜΕΝΙΑΣ, որտեղ արական սեռի τοῦ μεγάλου (մեծի) ածականը երբեք չի կարող վերաբերվել իգական սեռի Ἀρμενίας գոյականին. այն կարող է վերաբերվել բացառապես արական սեռի βασιλέως (թագավորի) գոյականին, քանի որ հունարենում գոյականի և ածականի սեռային համաձայնությունը պարտադիր է։ Բացի այդ, չի կարելի պնդել, թե Սառանյան Շապուհի որդին, դառնալով Հայաստանի թագավոր, անհրաժեշտաբար պետք է վերցներ Սասանյանների կատաղի թշնամի հայ Արշակունի թագավորների տիտղոսը։

Ուսումնասիրողները միանգամայն ճիշտ են նկատել, որ Գառնիի և Ապարանի հունարեն արձանագրություններում Տրդատի կրած Βασιλεὺς Μεγάλης Ἀρμενίας տիտղոսը միանգամայն համապատասխանում է մատենագրության միջոցով մեզ հասած Արշակունի գահակալների կրած «թագավոր Հայոց Մեծաց» տիտղոսին[13]։

Մեր կարծիքով, Հայաստանում թագավորական իշխանության ներքին բովանդակությունը բացահայտում են Գառնիի հունարեն արձանագրության մեջ Տրդատի տիտղոսաշարին հաջորդող ΑΝΑ [ΣΣΩΝ] ΩΣ ΔΕΣΠΟΤΗΣ «թագավորելով իբրև դեսպոտ»[14] բառերը։ Δεσπότης հունարեն նշանակում է՝ վեհապետ, գերագույն տեր, անսահմանափակ իշխանությամբ օժտված միապետ։ Այս բառի այդպիսի նշանակությունը առավել պարզ երևում է իր իսկ Տրդատի այն խոսքերի մեջ, որով նա Հռոմի ֆորումում դիմել էր Ներոնին. Ἐγώ, δέσποτα, Ἀρσάκου μὲν ἐκγονος Οὐολογαίσου δὲ καὶ Πακόρου τῶν βασιλέων ἀδελφός, σὸς δὲ δοῦλος εἰμι[15]. «Ես, ով վեհապետ, Արշակի հետնորդն եմ, Վաղարշ և Պակորոս թագավորների եղբայրը, իսկ քո ծառան։ Այստեղ δεσπότης բառով բնորոշված է Ներոնի բացարձակ իշխանությունը։

Այն, որ Տրդատ թագավորը իբրև δεσπότης պետք է օժտված լիներ անսահմանափակ իշխանությամբ, կարելի է հետևցնել նաև այն հանգամանքից, որ, ինչպես հաղորդում է Տակիտոսը և ինչպես պարզվում է Գառնիի արձանագրության մեր վերծանումից, նա ոչ միայն թագավոր էր, այլև քրմապետ[16]։

Վաղարշի և Տրդատի եռանդուն գործունեության շնորհիվ Հայաստանի գահը 66 թ. բսժին ընկավ պարթև Արշակունիների կրտսեր ճյուղին և երկիրը այնուհետև դարձավ Արշակունիների երկրորդ թագավորությունը (secundogenitur)։ Այս հանգամանքը պիտի իր որոշակի ազդեցությունն ունենար մ. թ. I դարի Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքի վրա։ Այդ ազդեցությունը երկակի բնույթի էր՝ արտաքին և ներքին իմաստով։ Հնարավոր է, որ Տրդատը, Վաղարշի անմիջական օգնությամբ Հայաստանի թագավոր դարձած լինելով, լիովին ազատ չէր վարելու ինքնուրույն արտաքին քաղաքականություն։ Նա պետք է հաշվի առներ նաև իր ավագ եղբոր՝ Պարթև թագավորի շահերը։ Մյուս կողմից, վայելելով նրա համակողմանի աջակցությունը, Տրդատն այժմ լայնորեն հնարավորություններն ուներ ներքին քաղաքականության ասպարեզում վճռական և գործուն միջոցների դիմելու համար. մի բան, որի կարիքը հրամայական զգում էր տասնամյակներ անընդհատ ծվատված երկիրը։

Հայաստանում «իբրև դեսպոտ» թագավորող միապետի իշխանությունը, անկասկած, կրում էր արևելյան բացարձակ միապետության բնույթ, որտեղ միապետի կամքը հավասար էր օրենքի։

Դաժան մարտերով հռոմեացիներին Հայաստան երկրից դուրս մղելով, Արշակունյաց հարստության հիմնադիրը թերևս իրավունք ուներ Հայաստանը համարելու իր իսկ նիզակով նվաճված երկիր՝ δορίκτητος χώρα, և որպես այդպիսին, այն դիտելու որպես իր բացարձակ

---

[13] Հ. Գ. Պերիհանյան, նշվ. աշխ.։ Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ.։

[14] Այսպես են ընթերցում Հ. Մանանդյանը և Ս. Կրկյաշարյանը, մինչդեռ ուրիշներն այլ ընթերցում են առաջարկում։ Բանն այն է, որ Գառնիի արձանագրության երկրորդ տողի վերջում գտնվող այդ բառի միայն առաջին երեք տառերն են պահպանվել՝ ΑΝΑ ...։ Ստ. Լիսիցյանի լրացումը՝ ΑΝΑΞΙΩΣ (անարժանաբար) թյուրիմացություն է. Ա. Աբրահամյանն այդ բառը լրացնում է՝ ΑΝΑΚΤΟΣ, որը լինելով ΑΝΑΞ (թագավոր) բառի սեռականը, չի կարելի ընդունել. Կ. Տրեվերը այն լրացնում է՝ ΑΝΑΚΤΩΡ (թագավոր) հոլովաձև բառով. Հ. Բարթիկյանը՝ ΑΝΑΚΤΟΡΟΝ (ապարանը) բառով. իսկ Գ. Սարգսյանը ΑΝΑ-ի հարցը համարում է դեռ ոչ պարզ։

[15] Dio Cass., LXIII, 5, 2.

[16] Tacit., Annal., XV, 24։ Այս հարցին մենք անդրադարձել ենք մեր հետևյալ հոդվածներում. «Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 9, էջ 56։ «Իվս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին», էջ 236։

սեփականություն։ Մեր անդրանիկ մատենագիրների գործերում կան վկայություններ, որոնք դալիս են հաստատելու մեր այս տեսակետը։

Փավստոսը պատմում է, թե Շապուհի զորքերի դեմ կռվելիս ընկնում է նաև Վաչե զորավարը, որի համար Հայաստան աշխարհը սգի մեջ էր։ Այդ կապակցությամբ Վրթանես եպիսկոպոսապետը հայոց թագավորի և զորքի առաջ հանդես է գալիս մխիթարական խոսքով և նշում, թե այս մարտում ընկածներն իրենց անձը զոհեցին հանուն աստվածային նշմարտության և հավատի, հանուն Հայոց աշխարհի բնիկ տիրոջ՝ «ի վերայ բնակի տեառն աշխարհիս»[17]։ Նույն Փավստոսի մոտ դարձյալ կարդում ենք, որ պարտված Շապուհը զարմանքով պատմում է հայկական զորքի քաջության մասին, նշելով, որ հայերը կռվում էին իրենց կորած արքայի՝ Արշակի համար, որին Շապուհն անվանում է «բնակ տէր» հայերի[18]։

Հայ Արշակունիներին տրված «բնակ տէր աշխարհիս Հայոց» բնորոշումը համահնչուն թվում Ագաթանգեղոսի այն հաղորդմանը, թե Տրդատ թագավորն իր իշխանությանը ենթակա ժողովրդին ուղղած հրովարտակներից մեկում Հայաստանը համարում է Արշակունյաց թագավորի «ձեռատունկ և ձեռասուն»[19]։

Բնական է, որ հայոց արքան ևս, որպես «բնակ տէր աշխարհի», անկախ աղդակցական մերձավորությունից և առանց աստիճանի խտրության, իր բոլոր հպատակների վրա ուներ մահու և կենաց իրավունք։

Մեր ասածի լավագույն ապացույցը Փավստոսի և Խորենացու մատյաններում պահպանված վկայություններն են։ Տվյալ դեպքում մենք նկատի ունենք Արշակ թագավորի հրամանով արքայի եղբորորդու՝ Գնելի սպանությունը[20], նույն Արշակի հրամանով հայրենիքի դավաճան Վահան Մամիկոնյանի սպանությունը[21], այնուհետև Պապ թագավորի հրամանով Հայր Մարդպետի սպանությունը[22] և այլ դեպքեր։ Եվ այս բոլորն այն ժամանակ, երբ արդեն IV դարի երկրորդ կեսին Արշակունի թագավորների բացարձակ իշխանությունը անհամեմատ թուլացել էր, իսկ դրան ի հակակշիռ, ուժեղացել էր կենտրոնախույս նախարարների քաղաքական ազդեցությունը։ Անկասկած, առաջին Արշակունիները, որոնք իրենց առավել հաստատուն էին զգում Հայաստանի գահի վրա, պետք է որ ավելի լայն ինքնակալական իշխանություն ունենային, քան իրենց հետնորդները IV դարում։

Արշակունի թագավորի ձեռքին էր ոչ միայն առանձին հպատակի կյանքը. ցանկության դեպքում ինքնակալը կարող էր բնաջնջել նախարարական ամբողջ գերդաստաններ։ Այսպես, Խորենացին պատմում է, թե հրապուրվելով պարսից Շապուհ արքայի խոստումներից, Սլկունյաց Սոռուկ նահապետը ամրանալով Ողական ամրոցում, ապստամբում է Տրդատ թագավորի դեմ և խոովում երկիրը։ Տրդատը դիմում է բոլոր նախարարներին հետևյալ խոսքերով. «Որ ոք ածցէ առ իս զնահապետն ազգին Սլկունեաց՝ տաց նմա յաւիտենական իշխանութեամբ զգեօղս և զդաստակերտս, և զամենայն իշխանութիւն ազգին Սլկունեաց»։ Այդ հանձն է առնում Մամգոնը, որը «յետ բազում վստահութեանն, ի միում աւուրց հաւանեցուցանէ զնահապետ ազգին Սլկունեաց ելանել արտաքս յամրոցէն և որսալ երկս. և ի միջամուխ լինել որսոցն՝ դիպեցուցանէ զապըստամբն։ Եւ ընթացեալ իւրովք արամբքն ի դուռն ամրոցին՝ ունի զբերդն, կապելով զամենայն արս որ ի ներքս։ Նա և զազգն Սլկունեաց խորհեցաւ բառնալ, և կոտորեաց զամենեսեան...։ Իսկ Մամգոն վաղվաղակի զգացուցանէ թագաւորին. ընդ որ ուրախացեալ Տրդատայ. զրէ հրովարտակ՝ իշխել նմա ամենայնի զոր խոստացաւն, և կարգել զնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամգոնեան»[23]։

Ահա ևս մի օրինակ Խորենացու «Հայոց Պատմությունից»։ «Ի հեռանալ մեծին Ներսիսի՝ ստեաց Արշակ ամենայն ուխտիցն, զոր եդ ընդ նախարարսն, և խնորեաց զքէն ձեռակերտին իւրոյ Արշակաւանու։ Եւ կոտորեաց զրազումս ի նախարարացն. մանաւանդ զազգն Կամսարականաց բառնայր ի միջոյ, շարակնելով ագահեալ յամուրն Արտազերս և ի քաղաք ոստանի նոցա Երուանդաշատ։ Եւ կոչեցեալ առ ինքն ի լքեալ արքունիսն Արմաւիր իբր զազգականս իւր. ի պատճառս

---

17 Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ, Պատմութիւն Հայոց, Գ, ժա։

18 Նույն տեղում, Ե, ե։

19 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, գլ. ԺԲ։

20 Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ, Դ, ժա։ «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Գ, իգ։

21 Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ, Դ, ժը։ Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Գ, իե։

22 Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ, Ե, գ։

23 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ձդ։

պատուոյ մեծարանաց, միահաղոյն զարս և զկանայս հանդերձ մանկամբք հրամայեաց կոտորել»[24]։

III—IV դարերում Հայաստանում արքայի կարգադրությամբ նախարարական ամբողջ տների բնաջնջման մասին Խորենացու հաղորդած նման փաստերը հաստատվում են նաև Փավստոսի մի շարք տեղեկություններով։ Բավարարվենք մեկ օրինակով։ Մատենագիրը, խոսելով Տիրան թագավորի (որն, ի դեպ, հայ Արշակունիների թվում միանգամայն թույլ միապետ է եղել) գահակալության ժամանակ Հայր Մարդպետի քսությունների և դավերի մասին, որոնց հետևանքով հայկական նախարարական մի շարք տներ բնաջնջվեցին, գրում է. «Բայց քան զամենեսին աւելի այր մի անօրէն և այսամուտ. որ աւելի ընդ ազգս նախարարցն զրդռէր զթագաւորն Տիրան։ Այս ինքն որ ունէր զպատիւն մեծի մարդպետութեանն, այր ներքինի՝ չարասիրտ, չարախորհուրդ, չարագործ. որում Հայր կոչէին։ Զբաղումս ի նախարարացն ետ քսութեամբ առանց վնասու կոտորել. և խանդարեաց զմեծ տէրութիւն թագաւորութեանն։

Մանաւանդ աւելի զերկու տոհմսն զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր, և անունդ առնել միահաղոյն զտոհմսն Ռշտունեաց և զտոհմն Արծրունեաց. բառնային ի միջոյ առաջեց ամենայն վնասու և յանցման, մինչ անգամ և զկգսն կոտորեցին ազգացն»[25]։

Իր հպատակների կյանքի տերը համարվող հայոց արքան միաժամանակ նրանց ինչքի գերագույն տերն էր։ Ուստի և նախարարական այս կամ այն տունը բնաջնջելուց հետո հայոց թագավորը իրավունք ուներ ունեզրկել ամբողջ տոհմը և բռնագրավված ինչքը տնօրինել իր հայեցողությամբ՝ նվիրել մի այլ նախարարի կամ «յարքունիս առնուլ»։

Հայաստանում արքայի և ավագանու միջև գոյություն ունեցած նման հարաբերություններ, երբ հպատակների կյանքն ու ինչքը միապետի կամայականության ասարկան էր, նկատելի են գեռևս Արտաշեսյան թագավորների ժամանակ։ Այսպես, պատմահայրը վկայում է, թե Տիգրան Մեծը «ցասուցեալ ընդ Վահունիսն, ...ընկենու զնոսա ի քրմութենէն, և զզիւղն յարքունիս առնու...»[26]։ Մի այլ վկայություն է պահպանվել նաև հունական աղբյուրներում։ Հայտնի է, որ Տիգրան II-ը, ձեռնամուխ լինելով Տիգրանակերտի կառուցմանը, շարժման մեջ դրեց իր տրամադրության տակ գտնված բոլոր միջոցները՝ օտար ռազմագերիներ, կառուցող վարպետներ, դրամ, ինչպես նաև բուն Հայաստանում նկատված բոլոր հնարավորությունները, կանգ չառնելով նույնիսկ հայ ավագանուն ունեզրկելու սպառնալիքի առաջ։ Ապպիանոսն այս առնչությամբ գրում է. «Այստեղ նա հավաքեց իր տերության ամենահայտնի մարդկանց, սպառնալով, որ այն, ինչ չեն վերցնի իրենց հետ՝ կբռնագրավվի»[27]։

Հայոց արքան շնորհազրկված նախարարներից խլված ինչքը բռնագրավում էր արքունիքի օգտին կամ պարգևում իր մերձավորներին և հավատարիմ նախարարներին։ Վերևում մենք տեսանք. որ Տրդատ Մեծը Սղուկի ինչքը բռնագրավելով պարգևեց Մամգոնին, որին հաջողվել էր խաբեությամբ կործանել Սլկունյաց նահապետին։

Նույնը կատարվում է նաև Տիրան թագավորի ժամանակ հայոց հարավային զնդի զորապետ Ռշտունյաց Զորա նահապետի հետ։ Զորան ընդվզում է Տիրանի դեմ այն բանի համար, որ սա, բյուզանդական կայսր Հուլիանոս Ուրացողից երկյուղելով, սպանել է տալիս Հուսիկ եպիսկոպոսին և Գրիգոր Լուսավորչի աշակերտ՝ ծերունի Դանիել քահանային։ «Տեսեալ զայս Տիրանայ,— գրում է Խորենացին,— և յոյժ զարհուրեալ՝ առաքէ զմարդպետն կոչեցեալ Հայր, և հանդերձ երդմամբ կոչէ առ ինքն զԶօրայ։ ...Եւ միայնացեալ Զօրայ, զայ առ արքայ յոչ կամաց. և արքայի զԶօրայ ի բուռն առեալ՝ ունի և զամուրն նոցին զԱխթամար, և բառնայ զամենեսին սատակմամբ։ ...Իսկ արքայ փոխանակ նորա կարգէ զՍաղամութ տէր Անծտայ»[28]։

Այլ դեպքում հայոց արքան բռնագրավում է այս կամ այն անձնավորության ինչքը ոչ թե իր ժերձավորներից մեկ ուրիշին վերապարգևելու, այլ սեփականելու նպատակով։

Այսպես, Խորենացին պատմում է, որ երբ Ներսես կաթողիկոսն իմացավ Գնելի սպանության մասին, անիծելով Արշակին և սպանության առիթ եղողին, հեռացավ և օրերով սուգ պահեց։ «Իսկ Արշակ... ազահելով ի զանձս սպանելոյն և ի ժառանգութիւն՝ յաւել առնուլ զկին նորին Փառանձեմ»[29]։ Պատմահայրը հաղորդում է նաև, որ Արշակ թագավորը, ցանկանալով նախարար-

---

24 Նույն տեղում, Գ, լա։ Նաև՝ Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, Դ, ժթ։

25 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, Դ, ժը։

26 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ժդ։

27 Appian., Mithr., 64.

28 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Դ, ժզ։

29 Նույն տեղում, իդ։

ներից վրեժ լուծել Արշակավանի կործանման համար, «կոտորեաց զրաղումս ի նախարարացն, մանաւանդ զազգն Կամսարականաց բառնայր ի միջոյ, չարակնելով ազահեալ յամուրն Արտագերս և ի քաղաք ոստանի նոցա Երուանդաշատ»[30]։

Քիչ անց նման քայլի է դիմում այնպիսի թույլ իշխանություն ունեցող մի թագավոր, ինչպիսին խոսրով վերջինն էր։ Վարազդատ Արշակունու մահից հետո Հայաստանը փաստորեն բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև (387 թ.)։ Բյուզանդական կողմում թագավորեց Արշակ III-ը, իսկ պարսկական մասի վրա Շապուհը թագավոր կարգեց խոսրովին։ Մինչ այդ, սակայն, պարսկական հատվածում տիրույթներ ունեցող հայ նախարարները ապահովության համար արդեն ապաստանել էին Արշակի մոտ։ Բայց երբ Սասանյան Շապուհը խոստացավ նրանց անձի և ինչքի ապահովություն, նրանց մի մասը վերադարձավ խոսրովի մոտ, իսկ մյուս մասը մնաց բյուզանդական կողմում։ «Վասն որոյ,— գրում է Խորենացին,— զժառանգութիւնս նոցա կալաւ խոսրով յարքունիս հրամանաւ Շապհոյ, և ոչ եթող զկալուածս որդւոյ ի հայր, և ոչ զեղբօր յեղբայրս»[31]։ Նույն խոսրովը, ի պատասխան ունեզրկված նախարարների դիմումին, որոնք հոժարում էին վերադառնալ նրա մոտ, եթե արքան խոստանար վերադարձնել իրենցից բռնագրավված կալվածքները, գրում է. «Երկրորդ դարձուցանել ի ձեզ ժառանգութիւնս ձեր, զոր ունիմք յարքունիս. բայց յայնմանէ, զոր ումեք ումեք պարգևեցաք, զի ոչ շրջին պարգևք թագաւորաց առանց վնասու»[32]։

Հայոց թագավորների կատարած ինչքի բռնագրավումների մասին պահպանված վկայությունների ամբողջությանը ծանոթանալիս ակնառու է դառնում հետաքրքիր մի հանգամանք։ Այդ հաղորդումները հիմնականում վերաբերում են հայ Արշակունիների թագավորության վերջին հարյուրամյակին, երբ կենտրոնական իշխանությունը երկրում համեմատաբար թուլացել էր և զլուխ էին բարձրացրել կենտրոնախույս ուժերը՝ ֆեոդալականացող նախարարները։ Այս փաստը դուցե որոշ չափով պիտի համարել հետևանքն այն բանի, որ մեր անդրանիկ մատենագիրները պատկերել են հիմնականում մ. թ. IV դարից հետո Հայաստանում ստեղծված իրավիճակը։ Ուստի և ուսումնասիրողն իզուր կփորձեր նրանց մատյաններում Արշակունիների թագավորության առաջին շրջանում կատարված ինչքի բռնագրավումների մասին հիշատակության հանդիպել։ Իսկ Խորենացի՞ն։ Չէ՞ որ նա հայ ժողովրդի անցյալ պատմությունը շարադրելիս հնարավորություն ուներ, նույնիսկ պարտավոր էր արձանագրելու նման փաստերը։ Բայց հողային բռնագրավումների մասին պատմահոր հաղորդած տեղեկությունները ևս վերաբերում են մ. թ. IV դարից այս կողմն ընկած ժամանակահատվածին, եթե չհաշվենք նրա այն եզակի վկայությունը, թե Տիգրանը «ցասուցեալ ընդ Վահունիսն, ...ընկենու զնոսա ի քրմութենէն, և զդիւցն յարքունիս առնու»[33]։

Թվում է, թե հնարավոր է անել այն ենթադրությունը, որ մեր պատմիչները գրկված են եղել անցյալի այդօրինակ դեպքերի մասին տվյալներից և գրել են իրենց ժամանակակից դեպքերի թարմ տպավորության տակ։ Սակայն Խորենացու վերոհիշյալ մթագ վկայությունը մեզ թելադրում է ավելի շուտ կարծել, թե այդպիսի միջադեպերը նախորդ դարերում սովորական չեն եղել. հակառակ դեպքում թագավորի և ազնվականության միջև մղվող երբեմն խուլ, հաճախ բացահայտ պայքարն ու նրա նշանակությունն ըմբռնող խորաթափանց պատմահայրը կհիշատակեր դրանք։

Բռնագրավումների ճանապարհով հողային հարցերը լուծելու եղանակը նոր երևույթ էր հայ Արշակունիների թագավորության վերջին հարյուրամյակի համար և պայմանավորված էր Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում մ. թ. ա. I—մ. թ. II դարերի ընթացքում տեղի ունեցած էական փոփոխություններով։

Մենք հակված ենք ենթադրելու, որ Տրդատ I-ի ժամանակ ամբողջ Հայաստանը, հելլենիստական թագավորությունների նման, համարվում էր արքունի երկիր (չարչ թագաւորի), արքայի սեփականություն, ուստի և երկրի որևէ հատվածը մեկ ուրիշից բռնագրավելու անհրաժեշտություն չէր կարող ծագել։ Եթե արքան ցանկանար իր մերձավորներից որևէ մեկին հողային նվիրատվություն անել, ապա կարող էր այդ իրագործել առանց ուրիշի շահերին դիպչելու. մի բան, որ հնարավոր չէր IV—V դարերում, երբ հայ նախարարների հողային տիրույթները աստիճանաբար աճել էին ի հաշիվ արքունի երկրի։

Հիրավի, եթե Ապարանի հունարեն արձանագրությունը վերաբերում է ոչ թե Տրդատ III-ին,

30 Նույն տեղում, լա։
31 Նույն տեղում, խգ։
32 Նույն տեղում, խը։
33 Նույն տեղում, Բ, ժդ։

այլ՝ I-ին[34], ապա մենք կունենանք անժխտելի ապացույցն այն բանի, որ Արշակունյաց հարստության հիմնադիրը Գնթունիներից մեկին, հավանաբար նրա մատուցած ինչ-որ ծառայության դիմաց, պարգևում է Նիգ քաղաքն իր դավառով (πόλιν Νίγην)[35]։

Արտաշեսյանների օրոք կատարված արտաքին նվաճումները հայոց թագավորին հնարավորություն էին տալիս ազնվականության հողային պահանջները բավարարել նոր գրավված երկրամասերի հաշվին, առանց ներքին բռնագրավումների։ Մինչդեռ հայ Արշակունիները ամբողջ ժամանակ պարփակված մնացին Հայկական լեռնաշխարհի բնական-աշխարհագրական սահմանների մեջ և այն բանից հետո, երբ նախարարներին արած հողային նվիրատվությունների հետևանքով արքունի երկիրը մեծապես կրճատվել էր, ստիպված էին ազնվականության մի մասին բավարարելու համար շնորհազրկել մյուս մասին[36]։

Հայտնի է, որ պետության քաղաքական գործունեությունն ընթանում է երկու ուղղությամբ՝ արտաքին և ներքին։ Ուստի թագավորի, որպես գերագույն իշխանության կրողի ֆունկցիաները պետք է դրսևորվեին և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքականության բնագավառներում։ Արտաքին քաղաքականության բնագավառում թագավորը վարում էր պատերազմ հայտարարելու, խաղաղություն հաստատելու, օտար դեսպաններ ընդունելու, դաշինք կնքելու հարցերը անձամբ կամ իր կողմից հատուկ նշանակված պատվիրակի միջոցով։

Դեռևս Արտաշեսյան թագավորները միջազգային հեղինակություն են վայելել և մասնակցել այլ երկրների միջև ծագած միջադեպերը հարթելու համար գումարված վեհաժողովներին։ Այսպես, Պոլիբիոսը, խոսելով մ. թ. ա. 180 թ. Փառնակ Պոնտացու և նրա դաշնակից Փոքր Հայքի տիրակալ Միհրդատի պատերազմի մասին Պերգամոնի, Կապադովկիայի և Բիթանիայի կազմած դաշնակցության դեմ, հիշատակում է կողմերի միջև ստորագրված հաշտության պայմանագիրը,

---

34 Ապարանի հունարեն արձանագրության առաջին հրատարակիչ Մ. Ի. Ռոստովցևը իրավամբ նշում է, որ այն պետք է վերաբերի Արշակունի երեք Տրդատներից մեկին, քանի որ դրանում կարդում ենք Τιριδάτης ο μεγα, Μεγάλης Ἀρμένιας βασιλεύς։ Մ. Ի. Ռոստովցևը ենթադրում էր, որ դա պետք է լինի Տրդատ III-ը, քանի որ, նրա կարծիքով, արձանագրության վերջում պահպանվել են մի երկու տառի հետքեր, որոնք նշում են 308 թ. (М. И. Ростовцев Апараская надпись царя Тиридата). Այսպիսի թվագրման ավելի քան կասկածելի լինելը նշել է դեռևս Կ. Տրեվերը (К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении, էջ 276—282)։ Մ. Ի. Ռոստովցևի առաջարկած թվագրմանը չի առարկում Հ. Հ. Մանանդյանը (Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 122)։ Բ. Ն. Առաքելյանը գտնում է, որ արձանագրության մեջ հիշատակված Տրդատը հավասար կերպով կարող է լինել և՛ I-ը, և՛ III-ը (Բ. Ն. Առաքելյան, «Կոշիկը» որպես սոցիալական տերմին, Արմֆանի «Տեղեկագիր», 1940, № 3, էջ 78)։ Կ. Վ. Տրեվերը իր հերթին մանրամասն հետազոտելով տվյալ արձանագրությունը և այն համեմատելով Գառնիի հունարեն արձանագրության հետ (մի բան, որի հնարավորությունը չուներ Մ. Ի. Ռոստովցևը), վճռականորեն մերժում է Ապարանի արձանագրությունը Տրդատ III-ին վերագրելու տեսակետը և գտնում, որ այն վերաբերում է Տրդատ II-ին (217—222 թթ.)։ Մեր կարծիքով, այդ երկու արձանագրությունները նույն ժամանակին են վերաբերում և դրանցում հիշատակված Տրդատը միևնույն անձնավորությունն է՝ Հայաստանի Արշակունյաց թագավորության հիմնադիրը։ Ինչո՞ւ։ 1) Երկու արձանագրություններում Տրդատի թագավորական տիտղոսաշարը նման է։ 2) Երկու արձանագրություններում տառաձևերը համընկնում են, մինչդեռ այդ տառերը այլ ձևերով են փորագրված III—IV դդ. սահմանագծին վերաբերող Տիգրանակերտի հունարեն արձանագրության մեջ, որտեղ տառերը պատկերված են ավելի համաչափ, երկարավուն, ուղիղ անկյուններով։ Առավել տարբերիչն այն է, որ այստեղ միշտ կիրառվել է կցագրումը (լիգատուրա) և հապավումը (C. F. Lehmann-Haupt, Eine griechische Inschrift aus der Spatzeit Tigranokertas, „Klio", VIII, 1908, էջ 497։ К. В. Тревер, նշվ. աշխ., տախտակ 88—90), մի բան, որ իսպառ բացակայում է Գառնիի և Ապարանի արձանագրություններում։ 3) Ապարանի արձանագրության բովանդակության ընդհանուր իմաստը ևս մեզ մղում է այդ ենթադրության։

35 М. И. Ростовцев, նշվ. աշխ., էջ 8։

36 Արտաքին նվաճումների հնարավորություն ունենալը կամ չունենալը իր անդրադարձումն է գտել հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի այլ երևույթների վրա ևս, ինչպիսիք են քաղաքաշինությունը և սինոյկիսմոսի հետ կապված խնդիրները (Ս. Մ. Կրկյաշարյան, Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 1, էջ 107—118)։

որի կնքմանը մասնակցել էր նաև «Արտաշեսը՝ Հայաստանի մեծագույն մասի տիրակալը»[37]։ Արտաշեսյանների արտաքին քաղաքական լայն կապերի մասին հայ և օտար մատենագիրների մոտ պահպանված վկայությունները բազմիցս ուսումնասիրության նյութ են դարձել, ուստի մենք անհրաժեշտ չենք համարում անդրադառնալ դրանց։

Առանձնապես հետաքրքիր է Հայաստանին հարևան Իբերիային վերաբերող Ստրաբոնի վկայությունը։ Խոսելով այդ երկրում մ. թ. ա. II դարում տիրող հարաբերությունների մասին, նա հավաստում է, թե Իբերիան բնակեցված է չորս դասի (=ε=ζα γένη) մարդկանցով, թե «...երկրորդը քրմերի դասն է, որոնց հանձնված է հարևանների հետ հարաբերություններ վարելու գործը»[38]։ Այս հաղորդման իմաստն այն է, որ քրմերը արտաքին հարաբերությունների հարցում կարևոր դեր էին խաղում. սակայն երկրի արտաքին քաղաքականության սանձերը, վերջին հաշվով, թագավորի ձեռքին էին և քրմերը հանդես էին գալիս սոսկ իբրև թագավորի հանձնակատարներ։

Հավանաբար Հայաստանում ևս քրմերը նման իրավասություններ են ունեցել։ Սակայն բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ Տրդատ I-ը ինքն էր վարում երկրի արտաքին քաղաքականությունը, քանի որ, ինչպես նշել ենք, Տրդատը միաժամանակ և՛ թագավոր էր, և՛ քրմապետ։ Մի վերապահություն։ Եթե Արտաշեսյանների ժամանակ հայոց թագավորը ի վիճակի էր առավել ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու (բացի վերջին շրջանից, երբ հայոց թագավորը հայտարարվեց «Հռոմի բարեկամ»), ապա Տրդատ Արշակունու գահակալությունից հետո հայոց թագավորն իր արտաքին քաղաքական հարաբերություններում պետք է հաշվի առներ Պարսկաստանում գահակալող Արշակունիների ավագ ճյուղի շահերը, որոնք, ի դեպ, ձեռնտու էին նաև Հայաստանի համար։ Հայ Արշակունիների արտաքին քաղաքականությունը կարող էր համընթաց լինել պարթևական արքունիքի շահերին հավանաբար մինչև Պարսկաստանում Սասանյան հարստության հաստատումը (226 թ.)։

Գառնիի արձանագրության մեջ ՀՈՒՅՍՈՎ ԱՆ ԹԵՐՈՎՆ (տիրելով իբրև դեսպոտ) արտահայտությունը բնութագրում է Տրդատի թագավորական իշխանության ներքին էությունը։ Ուստի, հայոց արքան ինքնիշխան էր նաև ներքին քաղաքականության բնագավառում, որտեղ ինքն էր հանդիսանում և՛ օրենքը, և՛ իրավունքի աղբյուրը։

Հայաստանում այդ ժամանակ կիրառված գրավոր օրենքների մասին մենք որոշակի տվյալներ չունենք, բայց մեզ հասած մի շարք տեղեկություններ հավանական են դարձնում այդպիսիների գոյության մասին ենթադրությունը։ Հայտնի է, որ Տիգրան II-ը տասներկու հելլենական քաղաքների բնակչությունը տեղահանելով փոխադրեց Հայաստան։ Այդ քաղաքների թվում էր նաև Կապադովկիայի մայրաքաղաք Մաժաքը, որտեղ գործադրվում էին հույն օրենսդիր Քարոնդասի օրենքները[39]։ Միանգամայն հնարավոր է, որ դրանք հույն գաղթականների հետ մուտք գործած լինեին նրանցով բնակեցված հայկական քաղաքները[40]։ Իրենց օրենքները կարող էին բերած լինել նաև այն հրեաները, որոնց Հայաստան էր քշել Տիգրանը։ Պիտի ենթադրել, որ այս հրեաների օրենքները ավելի երկար կյանք են ունեցել Հայաստանում, քան հույներինը, քանի որ Հռոմի դեմ Տիգրանի մղած պատերազմներից հետո քաղաքների հելլենական բնակչությունը վերադարձավ իր երկիրը, մինչդեռ հրեաները դեռևս երկար մնացին Հայաստանում, պահպանելով իրենց համայնքները[41]։

Հայոց թագավորի սահմանած օրենքների մասին ընդհանուր կարգի տեղեկություններ կան Խորենացու մատյանում։ Այսպես, նա նշում է, որ Վաղարշակը Արշակի կողմից Հայաստանի թագավոր հաստատվելուց հետո «կարգս կենցաղականս, ...սահմանեաց աշխարհիս»[42]։ Մի ուրիշ տեղամ պատմահայրը դարձյալ խոսում է Վաղարշակի սահմանած կարգերի՝ «օրէն թագաւորութեան» մասին[43]։

Վաղարշակը միաժամանակ հատուկ պաշտոնյաներ էր նշանակել, որոնք պարտ էին հետևել իր սահմանած օրենքների կատարմանը։ Այս է Խորենացու այն հաղորդման իմաստը, թե Վաղարշակը սահմանում է «իրաւարարս ի տանն արքունի, իրաւարարս և ի քաղաքս և յաւանսս»[44]։

---

37 Polyb., XXV, 2, 1—12.
38 Strabo, XII, 3, 6:
39 Նույն տեղում, 2, 9։
40 Տե՛ս Г. Х. Саркисян, Тигранакерт, М., 1960, էջ 64։
41 Մովսես Խորենացի, Գ, լե։ Փավստոս Բուզանդ, Դ, ժե։
42 Մովսես Խորենացի, Բ, գ։
43 Նույն տեղում, է։
44 Նույն տեղում, ը։

Դեռևս Հին Արևելքի երկրներում, այդ թվում նաև Ուրարտու պետության մեջ, արքաների ձեռքին էր նոր քաղաքներ ու բերդեր հիմնելու կարևոր իրավունքը։ Բավարարվենք հիշատակելով սոսկ Ուրարտուի տարածքի վրա ուրարտական թագավորների կողմից հիմնված քաղաքները՝ Մենուախինիլի, Ռուսախինիլի, Արգիշտիխինիլի, Էրեբունի, Թելշեբաինի և այլն։ Նորակառույց այդ քաղաքներն ու բերդ-բնակավայրերը շատ դեպքերում կոչվում էին թագավորի անունով։

Հելլենիստական ժամանակաշրջանում քաղաքաշինության մեջ այդ երևույթն իր հետագա զարգացումն ապրեց։ Ալեքսանդր Մակեդոնացու և նրա հաջորդների՝ Արևելքում կառուցած Ալեքսանդրիաները, Անտիոքները, Սելևկիաները, Լաոդիկիաները, Ապամեաները և դինաստիական այլ անուններ կրող քաղաքները պերճախոս վկայությունն են մեր ասածի։ Հետագայում հելլենիստական մաքր տերությունների տարածքի վրա ևս առաջացան թագավորների անունը կրող Ատտալիա, Նիկոմեդիա, Պրուսիա, Արիարաթիա, Փառնակիա, Արսամեա և այլ քաղաքները։

Ուրարտական քաղաքաշինության ավանդները ժառանգած և աստիճանաբար հելլենիզմի ոլորտը ներգրավվող Հայաստանը չէր կարող հեռու մնալ ամբողջ Արևելքն ընդգրկած քաղաքաշինության այս հուժկու շարժումից։ Երվանդունիների և Արտաշեսյանների թագավորության ժամանակ Հայաստանում ևս առաջացան հիմնադիր թագավորի անունը կրող մի շարք նոր քաղաքներ, ինչպես Երվանդաշատը, Արշամաշատը, Կարկաթիակերտը, Արտաշատը, Տիգրանակերտը և այլն[45]։ Հայկական հնագույն ավանդության համաձայն, Արմավիրը ևս կրում էր իր հիմնադրի՝ Արամայիսի անունը[46]։

Քաղաքաշինության այս ընթացքը Հայաստանում շարունակվեց նաև Արշակունիների թագավորության ժամանակ։ Այս ասպարեզում Հայաստանում Արշակունիների գործունեությունը չուներ այն թափը, ինչ Արտաշեսի և Տիգրան II-ի տարիներին։ Այսուհանդերձ Արշակունի թագավորները ևս ամեն հնարավորություն ի գործ են դրել Հայաստանում շինարարական աշխատանքներին զարկ տալու համար։ Մծուրն, Վաղարշապատ, Արշակավան քաղաքների կառուցումը, Տիկնունյաց անտառի տնկումը դրա լավագույն վկայություններն են։ Արշակունիներից քաղաքաշինությամբ զբաղվել է հատկապես Տրդատ I-ը։ Ճիշտ է, նրա անունը կրող քաղաք մեզ հայտնի չէ, սակայն նա վերաշինել է հռոմեացիների կողմից հիմնովին ավերված Արտաշատ և Տիգրանակերտ քաղաքները։ Բացի այդ, Դառնիի ամրոցի վերակառուցումը և Դառնիի հեթանոսական հոյակերտ տաճարի կառուցումն իսկ ինքնին մեզ իրավունք կտան Տրդատին դասելու հայոց շինարար թագավորների շարքը։

Երկրի գերագույն տերը լինելու հանգամանքով էր պայմանավորված հայոց թագավորի նաև այն իրավասությունը, ըստ որի մերձավորներին այս կամ այն ծառայության դիմաց նա ընդարձակ տիրույթներ էր պարգևում։ Այս երևույթի խտացրած արտահայտությունը պիտի համարել Փավստոսի այն վկայությունը, թե երբ հայ նախարարները բողոքում են Ներսեսին Արշակ թագավորի բռնությունների դեմ, կաթողիկոսը նրանց պատասխանում է. «Դուք ահա բոլորդ կաք ու վկա եք, որ բոլորդ Արշակունյաց ազգից եք ձեռք բերել ձեր դիրքը. ձեզանից ոմանք նրանից են նշանակվել գավառների տերեր, ոմանք աշխարհների մեծամեծներ, ոմանք խոշոր ավանների և գյուղերի, ոմանք գանձերի և զանազան դաստակերտների։ Որովհետև Արշակունյաց պիղծ ազգը թեպետ և հանցավոր է, արարիչ աստծու առաջ, բայց ձեզ բոլորիդ ազգից բարձրացրել է, մեկին գործ տալով, մյուսին պատիվ, մեկին իշխանություն, մյուսին գործակալություն»[47]։

Հայոց թագավորի՝ իր մերձավորներին շնորհած պարգևների մասին շատ վկայություններ կան մեր պատմիչների մոտ։ Ահա մի օրինակ Խորենացուց. «Բայց թագաւորին Տրդատայ մխիթարեալ զգլուխ որդւոցն Կամսարայ զԱրշաւիր՝ զինքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ ինա աւերէ յանուն հօրն, և կարգէ ի թիւ նախարարութեանցն։ Յաւելու և այլ պարգևս, զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչև ցկատար ծորոյն մեծի»[48]։

---

45 Տես Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, С. Т. Еремян, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 3, էջ 11 և հտ.։ Г. Х. Саркисян, Тигранакерт. էջ 30—48; С. М. Кркяшарян, Возникновение городов в Армении во II в. до н. э.—III в. н. э. «Научные доклады высшей школы. Исторические науки», 1961, № 4, էջ 148 և հտ.։

46 Մովսես Խորենացի, Ա, ժբ։ «Պատմութիւն Սեբեոսի ի Հերակլն», Երևան, 1939, Ա, ա։

47 Փավստոս Բուզանդ, Դ, ծա։

48 Մովսես Խորենացի, Բ, ղ։ Հմմտ. նաև՝ Խորենացի, Բ, ծբ, ղ։ Փավստոս Բուզանդ, Դ, ծա։

Արշակունի թագավորները, Արտաշեսյանների նման, հողային տիրություններ պարգևել են ոչ միայն աշխարհիկ ազնվականներին, այլև տաճարներին, եկեղեցիներին և հոգևորականներին։ Ագաթանգեղոսը գրում է, որ քրիստոնեությունն ընդունելուց հետո Տրդատ թագավորը «յամենայն իշխանութիւն իւրում առ հասարակ՝ զրեաց չորս չորս հողս երդոյ՝ յամենայն աղարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողս երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր»[49]։

Փավստոսը ևս հայտնում է. «Եւ հատ ևս յարքունիս Պապ թագաւոր զՀող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց»[50]։

Փավստոսը դարձյալ պատմում է, որ երբ Խոսրով Կոտակի թագավորության ժամանակ բնաջինջ արվեցին Մանավազյանների և Որդունիների նախարարական տոհմերը, սրանց կալվածքները տրվեցին Աղբիանոսին և Բասենի եպիսկոպոսին[51]։

Հոգևորականներին արված նվիրատվությունների, ինչպես նաև հեթանոսական տաճարների ինչքը քրիստոնեական եկեղեցուն ու նրա սպասավորներին անցնելու հետևանքով, արդեն IV դարի կեսերին անկասելի կերպով աճում էր եկեղեցապատկան հողատիրությունը՝ ի հաշիվ արքունի և աշխարհիկ հողատիրության։ Այս հանգամանքն էլ պայմանավորեց աշխարհիկ և հոգևոր հողատերերի՝ սոցիալական և քաղաքական լուրջ հետևանքներով հղի հակամարտությունը։

Արշակունի թագավորի իրավունքն էր նաև իր գերիշխանության տակ գտնվող երկրամասերում կառավարիչներ, ինչպես և արքունի պաշտոնյաներ նշանակելը։ Այս հարցին վերաբերող ամենակարևոր աղբյուրը Խորենացու «Հայոց Պատմության» երկրորդ գրքի է և Ը գլուխներն են, որոնցում պատմվում է Վաղարշակի վարչական բարեկարգումների մասին. այս հարցին մենք կանդրադառնանք առանձին առիթով։

Արտաշեսյանների օրոք թագավորական իշխանությունը Հայաստանում եղել է ժառանգական, անցել հորից որդի. արքայի անզավակ մահանալու դեպքում գահը ժառանգել է նրա եղբայրը կամ ամենամերձավոր ազգականը։ Գահակալման իրավունքը ժառանգական է եղել նաև հելլենիստական մյուս պետություններում։ Այդ նույնը, սակայն, չի կարելի ասել Հայաստանում Արշակունիների թագավորության սկզբնական շրջանի մասին։ Ճիշտ է, մեր մատենագիրների վկայությունների համաձայն հայկական գահը ժառանգաբար անցնում է հորից որդի, սակայն մեր պատմիչները (բացառելով Խորենացուն և Սեբեոսին) պատկերել են Հայաստանում Արշակունյաց թագավորության երկրորդ կեսը, այն էլ Պարսկաստանում Սասանյան հարստության հաստատումից հետո ընկած ժամանակահատվածը։ Հայաստանում գահը ժառանգաբար հորից որդուն անցնելու հարցում վճռական նշանակություն է ունեցել Պարսկաստանում Արշակունիների տապալումը և Սասանյանների իշխանության գլուխ անցնելը։

Մինչև Տրդատի թագավորելը Հայաստանը պարթևների և Հռոմի միջև պայքարի մրցասպարեզ էր։ Հռոմում պարթևների թեկնածու Տրդատի թագադրությամբ ասես յուրատեսակ պայման հաստատվեց երկու հակամարտ տերությունների միջև, ըստ որի ամեն անգամ, երբ Հայաստանի «թագավորական գահը թափուր էր լինում, Պարթև Արշակունիների թագավորական տոհմից ներկայացվելու էր հռոմեական կայսրության ի հաստատություն հարմար ու ընդունելի թեկնածու»[52]։ Տվյալ պայմաններում խոսք անգամ չի կարող լինել հայկական գահի ժառանգաբար հորից որդուն անցնելու մասին։

Նույն եզրակացության են հանգել նաև «Հայ ժողովրդի պատմության» բուհական դասագրքի հեղինակները, գրելով. «Չնայած Արշակունյաց դինաստիայի հաստատմանը, մինչև II դարի վերջը հայկական գահը ժառանգաբար չէր անցնում Հայաստանի Արշակունի թագավորների որդիներին։ Հռանդեայի դաշնագրի հիման վրա՝ յուրաքանչյուր թագավորի մահից հետո պարթև Արշակունիները հայկական գահի համար իրենց տոհմից առաջարկում էին նոր թեկնածու, որը կարող էր թագավորել հռոմեական կայսրության հավանությունը և հաստատությունը ստանալուց հետո միայն»[53]։

Արշակունյաց Հայաստանում գահակալման ժառանգության կարգի վերաբերյալ նույն կարծիքին է նաև Ս. Երեմյանը, գրելով, որ Խորենացու երկրորդ գրքի Հա-ՀԲ գլուխները նվիրված են

---

49 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ՃԺԹ, էջ 436։

50 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, Ե, լա։

51 Նույն տեղում, Գ, դ։

52 Հ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն..., հատ. Բ, մասն Ա, էջ 19։

53 «Հայ ժողովրդի պատմություն» (բուհական ձեռնարկ), հատ. 1, Երևան, 1963, էջ 249։

III դարի պատմական դեպքերի նկարագրությանը, երբ Մեծ Հայքի գահի վրա իրրև ժառանգական գահակալներ նոր էին հաստատվել հայ Արշակունիները»[54]։

Այս հարցը չի կարելի վերջնականապես լուծել, առանց հաստատապես վերականգնելու Հայաստանի քաղաքական պատմությունը տվյալ ժամանակահատվածում, մի բան, որ դժվար է սկզբնաղբյուրների արդի վիճակում։ Այդ ուղղությամբ ամենահաջող փորձը պիտի համարել Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Բ հատորի համապատասխան հատվածները[55]։ Հ. Մանանդյանի շարադրանքից հետևում է, որ Տրդատ I-ից մինչև II դարի վերջը Հայաստանում չէր կարող գահակալման ժառանգություն գոյություն ունեցած լինել։

Տրդատից հետո գահի վրա տեսնում ենք Արշակունի տոհմից Սանատրուկին (75—110 թթ.), բայց նրա՝ Տրդատի որդին լինելու մասին ոչ մի տվյալ չունենք։ Սանատրուկին հաջորդում է պարթևական Բակուր II-ի որդի Աշխադարը (110—113 թթ.)։ Սա գահընկեց է արվում և պարսկական գահի վրա Բակուրին հաջորդած Խոսրով թագավորը նրա փոխարեն Հայոց թագավոր է կարգում Բակուրի մյուս որդուն՝ Պարթամասիրին (113—114 թթ.)։ Այնուհետև երեք տարի, Տրայանոս կայսեր արևելյան արշավանքի հետևանքով, Հայաստանը նվաճվում է հռոմեական լեգեոնների կողմից։ Տրայանոսի մահից հետո հայկական թագավորությունը վերականգնվում է և գահին բազմում է Սանատրուկի որդի Վաղարշը (117—140/3 թթ.)։ Վաղարշին հաջորդում է Հռոմի դրածո՝ սենատոր Սոհեմոսը, որը Եմեսայի իշխանական տոհմից էր և մոր գծով Արշակունի։ Սա թագավորել է երկու անգամ՝ 140/3—161 և 164—185 թթ., Հայաստանում ստանալով Տիգրան անունը։ Սոհեմոս-Տիգրանի երկու գահակալումների միջև ընկած 2—3 տարվա ժամանակահատվածում թագավորել է պարթևների դրածո Բակուրը։ Սոհեմոս-Տիգրանին հաջորդում է Վաղարշ II-ը (պարթևական Վաղարշ IV-ի եղբա՞յրը), մինչև 216 թ., երբ հայկական գահի վրա տեսնում ենք Վաղարշի որդի Խոսրով I-ին։ Այսուհետև Հայաստանում թագավորական իշխանությունը դառնում է ժառանգական, համարյա մինչև հայկական Արշակունյաց թագավորության վերացումը։

1962 թ. Գառնիում հայտնաբերված արամերեն արձանագրության տվյալներից ևս կարելի է եզրակացնել, թե Արշակունյաց Հայաստանում թագավորական իշխանությունը դառնում է ժառանգական միայն II դ. վերջից, III դ. սկզբից հետո[56]։ Հայաստանում Արշակունիների իշխանությունը ժառանգական դառնալուն մեծապես պիտի խանգարեր նաև այն, որ հենց Պարսկաստանում իրենց՝ պարթև Արշակունիների իշխանությունը ևս ժառանգաբար չի անցել, այլ թագավորն ամեն անգամ ընտրվել է տոհմի անդամների իվից[57]։

Այսուհանդերձ կարծիք է եղել, թե Տրդատ I-ի մահից հետո Հայաստանի գահը ժառանգաբար անցել է նրա որդիներին[58]։ Այս կարծիքի սխալ լինելը ցույց է տվել Հ. Մանանդյանը[59]։

Երկրորդ անգամ անդրադառնալով այդ հարցին, Հ. Մանանդյանը գրում է. «Ինչպես հայտնի է, Տրդատ Ա-ի և նրա հաջորդների ժամանակ Հայոց թագավորությունը չդառավ ժառանգական նրանց շառավիղների գծով։ Արշակունյաց հարստության հաստատումը Հայաստանում, այսինքն՝ նրանց թագավորումը որդեցորդի, ինչպես այդ մատնանշել է Գևորգ Ասլանը, սկսվել էր միմիայն II դարի վերջում, և հայ Արշակունիների դինաստիայի հիմնադիրն է Վաղարշ Բ-ը»[60]։

Հ. Մանանդյանի վերջին դիտողության իմաստն այն է, որ Տրդատից մինչև Վաղարշ II-ը Հայաստանում թագավորած Արշակունիները դեռևս մնում էին պարթևներ, կապված պարսկական արքունիքի հետ. մինչդեռ Վաղարշից սկսած, հատկապես Պարսկաստանում իշխանությունը Սասանյաններին անցնելուց հետո, Հայաստանի Արշակունի թագավորները արդեն հայացել էին։

---

54 Ս. Տ. Երեմյան, Նախշ-ի-Ռուստեմի «Քաարա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրությունների վկայությունները..., էջ 60։

55 Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. Բ, մասն Ա, էջ 19—62։

56 Տե՛ս А. Г. Периханян, Арамейская надпись из Гарни, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 125։

57 М. М. Дьяконов, Очерки истории древнего Ирана, М., 1961, էջ 195։

58 Հ. Գաթրճյան, Տիեզերական պատմություն, հատ. Բ, Վիեննա, 1852, էջ 152։ Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, հատ. Ա, Թիֆլիս, 1895, էջ 253։

59 Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. Բ, մասն Ա, էջ 19։

60 Նույն տեղում, էջ 58։